

Բ. ԿԱՅՏԱԼՈՎ

СИГНАЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՎԵՐՆԱԳԻՐԸ
ՊԱՏԻ ԹԵՐԹՈՒՄ

ԿՈԼՏՆԵՑՆԱՅԻՆ ՈՒ ԲՐԵԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

07
4-19

ՀԱՅԱ. ԽՈՀ գԿԽ-ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. „ԽՈՐՀՐԴԱԿԱՆ“ ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939

Բ. ԿԱՅԴԱԼՈՎ

19 JUN 2009

07
4-19 ա/

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՊԱՏԻ ԹԵՐԹՈՒՄ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՒ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

Հայկական ԽՍՀ ԺԿԽ Հրատարակչություն
«Խորհրդային Հայաստան»

ՅԵՐԵՎԱՆ

1939

Բ. ԿԱՅԴԱԼՈՎ

**Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր Ը
ՊԱՏԻ ԹԵՐԹ-ՌԻՄ**

ՎԵՐՆԱԳՐԻ ՆԺԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ձեռքը վերցնելով տպագիր թերթը, մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում Հոդվածների, թղթակցությունների, հեռագրերի վերնագրերի վրա: Վերնագրերն ոգնում են ընթերցողին ծանոթանալ թերթին, իմանալ, թե վորտեղ ինչ նյութ է տեղափորված, թե ինչ կարելոր դեպքերի մասին և հազորում թերթը, ինչ թերժաներ ու հարցեր են լուսաբանվում այնուեղ:

Սովորաբար վերնագրերն այս կամ այն չափով յերեկան և հանում Հոդվածի կամ թղթակցության բովանդակությունը, կամ զլիավոր միտքը: Ըստ վերնագրերի, ընթերցողը փնտում է ավելի կարեվոր և իրեն հետաքրքրող նյութը:

Պատի թերթերում ընթերցողը ևս հատուկ ուշադրություն է դարձնում վերնագրերի վրա: Յերբեմն վատ, վոչ տեղին դրված վերնագրերը փչացնում են թղթակցություններից ստացված տպավորությունը, վանում են դյուղթղթակիցներին թերթին մասնակցելուց, զցում են խմբկովի հեղինակությունը: Պատա-

3810
39



հում են պատի թերթերի խմբագիրներ, վորոնք չեն ցանկանում լավ մտածել հողվածների ու թղթակցությունների վերնադրերի վրա և բոլոր դեպքերում ողտվում են միանման վերնադրերից, ինչպես որինակ՝ «Ավելի ուշադրություն», «Ուժեղացնել տեմպերը», «Պետք ե հավաքվել», «Խփել թերություններին» և այլն:

Մարքովզի հիմնադիրները Մարքսն ու Ենդելսը շատ մեծ նշանակություն ելին տալիս իրենց զրբերի ու հողվածների վերնադրերին: «Կապիտալ»-ի առաջին հատորի մասերից մեկի մասին կարլ Մարքսին զրած նամակում Ենդելսն ուշադրություն դարձրեց աշխատությունն առանձին վերնադրերով ավելի մանր ստորաբաժանումների վերածելու անհրաժեշտության վրա, վորպեսզի հեշտացվի ընթերցողի համար այդ նշանավոր աշխատանքի յուրացումը: Յեզ Մարքսը հետեւեց Ենդելսի խորհրդին: Ենդելսին դրած իր պատասխան նամակում նա զրում է.

«Քո խորհրդի համաձայն, յես յուրաքանչյուր հաջորդ դրույթ բաժանել եմ պարագրաֆների և այլն, հատուկ վերնադրերով»:

Մեծ խնամքով եր աշխատում Լենինն իր յերկերի վերնադրերի վրա: Վլադիմիր Խլիչը նշանակելով հողվածի վարուչակի թեման, մտածելով նրա բովանդակությունը, միաժամանակ ծրագրում եր վերնադիրը, վորովհետև գտնում եր, վոր վերնադիրը պետք ե համապատասխանի հողվածի բովանդակությանը և վոր վերնադիրը կարող ե արտահայտել այն, ինչ դիմավորն ե ու ավելի բնորոշ ե այդ հողվածում:

Բոլշևիկներն «Վակերյող» թերթի համար «Փորձ-

նական մոբիլիզացիա (պրոլետարիատի բանակի մոբիլիզացիան)» թեմայի մասին հողված նախագծելիս: Լենինն սկզբում յենթագրում եր այդ վերնադրել «Պրոլետարական ուժերի մոբիլիզացիա», բայց վորոշ ժամանակից հետո կրկին վերադառնում ե վերնադրին և նկատում: «Անունը, թերևս, անպետք ե, վորովհետեւ շատ ընդհանուր ե, զրեթե շաբանաբար ընդհանուր ե, չի արտահայտում պրոլետարական շարժման անցումը հեղափոխության»: Գրելով այդ հողվածի առաջին ուրագագիծը Վլադիմիր Խլիչը ցանկանում եր այն անվանել «Որվա չարիք», բայց կրկին զժողոհ մնաց այդ անունից և իր հողվածը վերնադրեց ձեռոր խնդիրներ ու նոր ուժերը: Լենինի ու Ստալինի ստեղծագործությունների վերնադրերը մեղ տալիս են քաղաքական սրության, սկզբունքայնության, վեղարվեստական մշակման հիմնարկ որինակներ: Լենինի ու Ստալինի մոտ աշխատությունների շատ անուններ արտահայտված են դրական ձեվով, ընդվորում այդ վերնադրերը յերբեմն լողունդներ են:

Որինակ.

«Բոլշևիկները պետք ե վերցնեն իշխանությունը» (Լենին):

«Պետք ե մերկացնել կապիտալիստներին» (Լենին):

«Հողը դյուլացիներին» (ՍՏԱԼԻՆ):

«Հակահեղափոխությունն ուժեր և հավաքումպատրաստվեցեք հակահարվածի» (ՍՏԱԼԻՆ):

Լենինի շատ աշխատությունների անուններն արտահայտված են հարցական ձեվով:

«Ի՞նչ անել»

«Ո՞վ ե պատասխանատու»

«Ի՞նչի համար պայքարել»

«Հաշոռություն, թե պատերազմ»

Անուների այդ ձեվն իր հոդվածների համար
յերբեմն ովտագործում ե և ընկեր Ստալինը։ Որինակ։

«Ի՞նչ ե մեղ հարկավոր»

«Ի՞նչ են ուզում կապիտալիստները»

«Ի՞նչումն և մեր ուժը»

Իրենց հոդվածներին հարցական ձեվի անուններ
տալով Լենինն ու Ստալինն անսովոր պարզությամբ
ու լիովին հենց այստեղ, իրենց հոդվածներում պա-
տասխանում եյին այն հարցին, վոր իրենք դրել
եյին վերնագրում։

Լենինի մոտ մենք հանդիպում ենք հոդվածների
վերնագրերի և բացականչական ձեվով, որինակ։

«Խափանվեց», «Զեռներդ հեռու»։

Լենինն ու Ստալինը հաճախ ողովում եյին ծաղ-
րական (հեգինական) վերնագրերից, ինչպես և ժողո-
վըրդին լայնորեն ծանոթ առածներից ու դարձվածք-
ներից։ Որինակ Լենինի աշխատություններում մենք
ունենք այսպիսի վերնագրեր։ «Փափուկ անկողին են
դցում, բայց կոչտ քնում», «Կիուն դովում ե աքո-
րին» և այլն։

Ընկեր Ստալինի աշխատություններում կան այս-
պիսի վերնագրեր։ «Վորքան խորանում ես անտա-
ռում . . .», «Զեդ սպասելուց բան չե դուրս դա»։

Լենինի և Ստալինի աշխատություններում յեղած-
վերնագրերն ունեն բացառիկ մեծ քաղաքական նշա-
նակություն և հանդիսանում են հոր զենք մասսա-

ներին մորիլիղացիայի յենթարկելու համար։ Լենինի
և Ստալինի կարեվորագույն հոդվածների վերնագրերը
հանդիսանում են կուսակցության ու խորհրդային
իշխանության կարձ «Ճևակերպված հերթական խնդիր-
ները, հանդիսանում են գործելու զորեղ կոչ։

Լենինի ու Ստալինի վերնագրերում պետք է ընդգ
ծել բացառիկ գրական վարպետությունը։

Այդ վերնագրերը խոսում են այն մասին, թե ինչ-
պես կարելի յե մի քանի բառով ցայտուն կերպով ու
վորոշակիորեն արտահայտել հոդվածի դիմավոր գա-
ղաքարը, կարելի յե հաջող համեմատություն անել։
Լենինն ու Ստալինը միշտ խուսափում եյին շարլոն,
միատեսակ վերնագրերից, վորոնց այնքան սիրահար
են մեր վորոշ խմբագիրները։

Վերնագրերը ՊԵՏՐ և ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅԵՆ ՄԲ-
ՏԱԾԿԱԾ ԼԻՆԵՆ

Մեր բոլշևիկյան մամուլի հիմնական ու վճռա-
կան սկզբունքը հանդիսանում է նրա կուսակցականու-
թյունը, քաղաքական սկզբունքայնությունը։ Այդ
պատճառով վերնագրերից, ինչպես թերթում տեղավոր-
վող յուրաքանչյուր նյութից, ամենից առաջ պահանջ-
վում ե, վոր նա բաղաքանական նիշտ լինի, մը-
տածված, պարզորշ։

Ամենից առաջ վերնագրերը պետք է արտացոլի հոդ-
վածի, քղթակցության բովանդակությունը, լինի հա-
սարակ ու հասկանալի ընթերցողին, իր վրա ու-
շադրություն գրավող, պետք է հետաքրքրություն
առաջացնի գեղարի քղթակցությունը կամ հոդվածը և,

հասկանալի յէ լինի քաղաքանապես նիշտ, արտահայտիչ և գրագետ:

Դժբախտաբար կոլտնտեսային պատի թերթերում վերնագրերը հաճախ կրում են քաղաքական փնտիռության, չմտածվածության՝ դեպի նրանք խմբագրի ու խմբկոլի ցուցաբերած անպատճանատու վերաբերմունքի հետքեր: «Նաշ պուտ» պատի թերթում (Ալմա-Աթայի մարզ, Անդրեյվակի շրջան, «Վատրեչա» կոլտնտեսություն) տրված ե «Բախտը բերեց հարստացան» վերնագրեր: Այդ վերնագրի տակ յեղած թըղթակցությունից յերեվում ե, վոր ձիաբուծական ֆերմա կազմակերպելու և ձիերին լավ ինամելու չնորհիվ կոլտնտեսությունում պահպանել են քուռակիների չըտեսնված մեծ աճ: Յեվ քանի վոր ձիաբուծություն այդ կոլտնտեսության համար հատկապես մեծ նշանակություն ունի, ապա մեծ աճը նպաստում ե այն բանին, վոր կոլտնտեսականները դառնում են ունելոր:

Կարելի յէ արդյոք առել, թէ «Բախտը բերեց»: Իհարկե վոչ: Պետք ե այն միտքն ընդդեմ, թէ ձիերին լավ ինամելու չնորհիվ կոլտնտեսականները բարելավում են իրենց բարեկեցությունը:

Սնդամ այսդիսի մի դարձվածք կա «Լավ ինամը ըլ մեծ աճ ե»: Իսկ թերթում այնպես ե օտացվել, վոր իւր ամեն ինչ կախված ե պատահականությունից, բախտի բերմունքից: Թէ բախտներս բանեց ուրեմն ունեվորներ կլինենք, — կարծես թէ մտածում ե խմբագրեր, — իսկ յեթե վո՞չ փոչինչ չես կարող անել: Ինչ առել կուզի, վոր նման վերնագրերը մասսաներին

մոբիլիզացէայի չեն յենթարկում կոլտնտեսության հետագա ամբաղնդման և ստախանովյան աշխատանքի համար: Հետեվապես այդ վերնագրերը քաղաքականապես մտածված չե, և սիալ ե:

Ելի մի որինակ՝ յերբ խմբելով թեթելամտորեն ե մոտեցել հողվածի վերնագրին: «Զա ուրոժայ» պատի թերթում (Նովութիրսկի մարզ, Կրիվոչյանսկի չըջան, «Մարտի 8-ը» կոլտնտեսություն) ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի ընտրությունների նախորյակին մի հողվածեր տեվավագած մեծ վերնագրի տակ, «Այսպես թէ այնպես, բայց Գերազույն Խորհրդի ընտրություններին պատրաստ չեն»:

Խմբագրությունն այդ անպատճաստությունը նրանով ե ապացուցում, վոր հացահատիկի կալսելն ուշացել ե, վոչ բոլոր կոլտնտեսականներն են սոցմըրդման պայմանագրեր կնքել, ամբողջությամբ չեն ավարտված փոխառության ու կամավոր մուծումների հաշիվները:

Կարող ե պատահել, վոր խմբագրությունը ցանկացել ե մոբիլիզացիայի յենթարկել կոլտնտեսականներին՝ աշխատանքները բարեկալելու համար, կատարելու վերցրած պարտականությունները: Բայց այսպիսի վերնագրերը մասսաներին մոբիլիզացիայի չի յենթարկում: Այս վերնագրի անմտածվածությունը և սիսարինելը կայանում են «Այսպես թէ այնպես» բառերի մեջ:

ՀՀՐԱՄԱՅԵԼ, ԱՅԼ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ

Պատահում են պատի թերթեր, վորոնք յուրացրել են աշխատանքի մխանգամայն սիալ, վոչ բոլչեմիկան

վոճ: Այդպիսի պատի թերթի յուրաքանչյուր համարում սփռված են այնպիսի վերնադրեր վորոնք ալեւի շատ նման են հրամանների, կարգադրությունների, քան հողվածների ու թղթակցությունների վերնադրերի: Ահա այդպիսի վերնադրերի բնույթը.

«Պատժել բիգադիր Պետրովին»

«Անհապաղ խրճիթվար դանել»

«Դատի տալ» և այլն:

Այդպիսի վոչ ճիշտ տոն եւ վերցնում «Ստախանովեց» թերթը (Վորոնեժի մարզ, Բորիսովլեբսկի կուտնանություն): Թերթն անվերջ հրամայում է «Քաղաքանել ճակնդեղը», «Հավաքել արեվածաղիկը», «Ավելի լավ աշխատել», «Զիապաններին ձղել», «Յանքնակել»:

Կոլտնտեսության պատի թերթը, դա հասարակայնության ձայնն է: Թերթն արտահայտում է կոլտնտեսության առաջավոր մարդկանց կարծիքը, գործում է համոզելու մեթոդով, որինակի ուժով, ոգնում է աշխատանքում, յետ մնացողներին սովորեցնում է հետեւել առաջավորների որինակին, և, մյուս կողմից, հանդես է գալիս լողիքի, գոփողների դեմ, մերկացնում է աշխատանքային կարգապահությունը խախտողներին, հանրային սեփականությունը հափշտակուններին, մասնակցում կոլտնտեսության ամբողջ կյանքին: «Յանքն սկսել»-ի վոխարեն կարելի յետ տալ «Սկսում ենք ցանքը»: Այս հնչում է վոչ վորպես կարգադրություն, այլ վորպես կորեկտիվ, համերաշխատացների աշխատանքի կոչ, վորի մեջ մտնում են բոլորը,

ընդվորում և թերթը, նրա խմբկուն ու գյուղթղթակեցները:

«Նովայա ժիկն» թերթը (Ռոստովի մարզ, Մյասնիկովի շրջան, «Մայակ կուլտուրի» կոլտնտեսություն), բոլորովին սխալ կերպով յենթադրում է, թե իր ինդիրը միայն բոլորին քննադատել և խիստ հայնոյելն է:

Թերթն իր կոլտնտեսությունում վոչինչ դրական չի տեսնում, չի տեսնում լավ աշխատանքի որինակեները, աղնիվ վերաբերմունքը դեպի աշխատանքը: Այդպատճառով թերթը միքն է այսպիսի վերնադրերով: «Ժողովը տապալեցին», Պահակ Կորնիչչեվան քնեց» «Լյուդվինսկայան արեվածաղիկ է գողանում», «Զերկասովան լոդը է», «Սուբբոտինը քնում է մինչեւ ժամը 10-ը», «Պաջը ավելաքիմը չի աշխատում» և այլն:

Իհարկե կոլտնտեսային պատի թերթի խնդիրն է բաց անել սխալները, ցույց տալ աշխատանքի թերությունները, ողնել ուղղելու գրանք: Բայց չի կարելի նկատել նվաճումները: որինակելի աշխատանքի փառատերը: Այդ նշանակում է կորվել կոլտնտեսականներից, չտեսնել իրական կյանքը: Այն վիթխարի ստեղծագործական աշխատանքը, վոր կատարվում է այժմ մեր կոլտնտեսություններում:

Վաղիմիր Խլյիչ Լենինը մեր թերթերի բնույթի մասին գրած իր նշանակոր հողվածում նշել է, վոր քննադատության կողքին պետք է կոչ անել սովորել լավից, ցույց տալ աշխատանքի դրական որինակները: «Ավելի շատ ուշադրություն այն բանին, թե ինչպես

բանմուրներն ու գյուղացիական մասսան գործնականում, իրենց առորյա աշխատանքում կառուցում են ինչ վոր բան»— գրել է Վլադիմիր Իլյիչը:

Ստալինյան Սահմանադրությունը վեր է հանում ինորէ բրդային քաղաքացու արժանապատվությունը: Մեր մամուլում տեղ չտեղ է ունենան անիրավացի վիրավորանքն ու անարգանքը: Բայց ահա «Ռուգարնիկ» թերթը (Որջոնիկիձեյի յերկրամաս, «Սովետսկայա կուրտուրա» կոլտնտեսություն), ամեն մի փոքրիկ առիթով ճշացող վերնազրեր ե տալիս «Խուլիգանը», «Անբանը», «Կաշառակերը», «Լողը»: Բայց և այս ել խմբութին քիչ ե թվում, և նա մտածեց ոգտագործել այս դեպքը ալելի «ուժեղ» վերնազրի համար: Կոլտնտեսուհի Մ-ն վառելու համար վերցրել եր խաղողի վաղի մի քանի հենարան, կարող ե պատահել, վոր նա չդիտեր թե ինչի համար են նախատեսված այլ ցողերը, կարող ե պատահել ծուլացել ե ուրիշ վառելիքի վրունել: Փաստը ցավալի յե և պատի թերթը պետք ե մի լավ քննադատեր դրա համար կոլտնտեսուհի Մ-ին: Բայց կարելի յե արդյոք այդ վերմունքի համար անվանել վնասարար, ինչ պես արել ե թերթը, զրագրտելով նրան այդ ամոթաւով:

Վնասարարների հետ, ինչպես հայտնի յե խորշ բրդային իշխանությունը, մեր ժողովուրդն անխնա զատաստան են տեսնում: Սակայն պատի թերթի խմբութ հնարավոր համարեց կոլտնտեսուհի Մ-ի վարմունքի մասին թղթակցություն տեղավորել «Վնասարար» մեծ վերնազրի տակ:

1928 թ. ընկեր Ստալինը հանդես յեկալ «Պրավդա»-ում «ինքնաքննադատության լոգունդի դուհեկացման դեմ» հոդվածով:

Այդ հոդվածում նա ցուցում է տվել.

«Քննադատեցնեք մեր շինարարության թերությունները, բայց միք այլանդակի ինքնաքննադատության լոգունդը և այն միք դարձնի մեր տնտեսական և բուլոր այլ աշխատաղներին թունավորելու զենք...» «...քննադատեցնեք մեր շինարարության թերությունները՝ բայց միք դրեհկացնի ինքնաքննադատության լոգունդը և այն միք դարձնի ոեկամային վարժությունների զենք...»:

Ընկեր Ստալինի այս ցուցումը պետք է լավ հիշեն բոլոր լրադրային աշխատաղները: Հետաքըրքական, բովանդակալից վերնազրը բոլորովին ել նշացող ըլպիտ է լինի:

Պատահում են և պատի թերթեր, վորոնք տեղափորում են ճշացող վերնազրեր: Այսպես որինակ «Նովիյ պուտ» կոլտնտեսային պատի թերթը (իվանովի մարզ, Շույսկի շրջան) մի թղթակցություն ե ստացել այն մասին, վոր նամակատար Կորսակովը սիրում է խմել, իսկ այդ պատճառով փոստն ուշանում է: Տերթն այդ թղթակցությունը տեղավորեց «Հարբած փոստը» աղաղակող վերնազրի տակ:

Եկրեմն պատի թերթերի խմբուները վագելով ճշացող վերնազրերի յետելից, փշացնում են թղթակցությունները «Կրասնիյ Բուղյոնովեց» կոլտնտեսության (Սմոլենսկի մարզ, Պոգարսկի շրջան) պատի թերթի խմբագիրը կոլտնտեսական Կուլիշենկից «Հար-

բեցողը» թղթակցություն ստանալով, վորոշեց ուղղել վերնագիրը։ Այդ վերնագրով թղթակցության մեջ խոսվում էր այն մասին, վոր կուտնօտեսական Անիս Ծոմոնցելը հարբեցողությամբ և պարապում և հարբած դրությամբ կնոջը դանակով սպառնացել է։

Խմբադիր Շալկինը այդ թղթակցությունը տեղավորելե «Անիսն անբարոյականանում է» վերնագրի տակ։ Տվյալ վերնագիրը չի համապատասխանում թղթակցության բովանդակությանը և պարզապես անհամանելի յէ։

ԳՐԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վերնագիրը, ինչպես և ընդհանրապես թերթում տպագրող ամբողջ նյութը, պետք է դրադեմ լինի։

«Պուտ ուղարնիկա» պատի թերթում (Զկալովի ժարդ Տոցկի շրջան, «Մայակ Խլյիչա» կոլտնտեսություն) մենք կարդում ենք հոդվածների և թղթակցությունների այսափիս անդրագետ վերնագրեր։ «Պաքարում են բարձր բերքի համար», «գողնում են կոլտնտեսության դույքը», «Նոր փոխառություն բաց թողնե մասին» և այլն։ Թերթերի նման անդրագիտության վրա ծիծաղում են անդամ դպրոցական յերեխաները։

Հաճախ վերնագրերը գրվում են անդրագետ, վոչ այն պատճառով, վոր խմբկոյը չգիտի ինչպես գրել բառը կամ Փրազը, այլ անփութության, անդատառախանատվության հետեւանքով։ Այսպես որինակ, իշխանովսկի մարզի, Շույսկի շրջանի, Սեմեյկինսկի կոլտնտեսության բրիգադային պատի թերթում ա-

ռաջնորդողը վերնագրված էր «Կոմսոլների որինակը», իսկ տեքստում «Կոմսոմոլիստներ» բառը յերեք անգամ ճիշտ է դրված։ Այստեղ ակներեկ անփութությունն է։

Գրականապես անդրագետ վերնագրեր հանդիպում էն շատ պատի թերթերում։

Անհրաժեշտ է պատի թերթերի ուշագրությունը հրավիրել վերնագրերի համար բառերի մանրակրկիտ ընտրության ու նիշու ոգտագործման վրա։ Բառը վերնագրում ոգտադրություն առաջ, հարկավոր եմտածել նրա ուղղակի նշանակության վրա, և այն մասին, թե վորքան է տեղին այդ բառը տվյալ վերնագրում։ Պարզաբանենք այս յերկու որինակներով։ Լրադրային վերնագրերում հաճախ հանդիպում ե «չնորհիվ» բառը։ Վերցնենք այսպիսի վերնագրի։ «Անհոգության չնորհիվ կարտոֆելը միշացել է»։ Տվյալ դեպքում «չնորհիվ» բառը սխալ է դործածակած։ Անհոգության համար, չե վոր, չնորհակալ չեն լինում այլ քննադատում և պայքարում են։ Այս գեղքում, ակներեկ է, հարկավոր եր ասել. «Անհոգության հետեւանքով», կամ «Անհոգության արդյունքով», կամ «Անհոգության պատճառով»։ Իսկ ահա «Կոլտնտեսականի զղոնության չնորհիվ թշնամին բռնված և վերնագրում «չնորհիվ» բառն ոգտադրված է ճիշտ, տեղին։

Շատ հաճախ պատի թերթերի վերնագրերում հանդիպում է անտեղի դրված «մշակել» բառը։ Որինակ «Ստախանովից» թերթը (Վորոնեժի մարզ, Բորիսովելլյանի շրջան, Կաղանովիչի անվան կոլտնտեսություն) տվել է «Մշակում ենք ընտրությունների կա-

նոնադրությունը»: Ուրիշ պատի թերթերն ել լիքն են «Մշակում ենք նոր որենքը», «Մշակում ենք կուսակցության կենտրոմի վորոշումը», «Մշակում ենք կուսակցության պատմությունը» և այլն:

Այս բոլոր գեղքերումն ել «Մշակել» բառն անտեղի յե բերված: Հասկանալի յե, վոր այստեղ խոսքը մշակման մասին չե, այլ կուսակցության ու կառավարության կարեվորագույն փաստաթղթերի ուսումնասիրության կամ այդ փաստաթղթերի հետ ծանոթանալու մասին ե: Ընդհանրապես այդ բառը հաճախ ոգտագործում են ամենատարբեր գեղքերում, առանց մտածելու նրա խիստական խմաստի վրա: «Մշակել» բառն ոգտագործում են և քննադատելու իմաստով, և ուսումնասիրելու իմաստով:

ԽՈՒՍԱՓԵԼ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ ՈԳՏԱԳՈՐ- ՆԵԼՈՒՑ

Վերնագիրը վորքան կարելի յե պետք ե հասարակ, պարզ ու հասկանալի լինի: Պետք ե խուսափել առանց կարեվորության ոտար բառեր գործածելուց, պետք ե հիշել, վոր ընթերցողների մեծամասնությանը շատ ոտար բառեր անհասկանալի յեն: Դժբախտաբար պատի թերթի աշխատողների մեջ կան մարդիկ, վորոնք սիրում են վերնագրերի մեջ «ներս խցկել» իրենց լսած կամ կարդացած ոտար բառերը: «Վըս-
տըրեչա» կոլտնտեսության թերթը (Ղաղախական
ԽՍՀ) ակումբի ստացած նոր կինոնկարի մասին տեղափորել և մի թղթակցություն այսպիսի վերնագրով: «Յուցադրվելու յե պոպուլյար Փիլմ»: կարելի յեր

տակ ավելի հասարակ ու հասկանալի, վոր ցուցադրվելու յե հայտնի կինոնկար: Այնինչ խմբկովն ընտրելու յերկու ոտար բառերով մի վերնագրի:

Լենինը բազմիցս հանդիս ե յեկել ոտար բառերն առանց կարեվորության ոգտագործելու գեմ: Ուուսերին լեզվի զոտման մասին զբած հոդվածում վելադիմիր Իվլէը դրել ե.

«Ուուսաց-լեզուն մենք փչացնում ենք: Ոտար բառերն ոգտագործում ենք առանց կարեվորության: Ուուսագործում ենք նրանք սխալ: Ինչո՞ւ: «Դեֆեկտաներ» ասել, յերբ կարելի յե ասել թերություններ, կամ պակասություններ կամ բացեր»:

«...Ժամանակը չ^Ե արդյոք մեղ պատերազմ հայտաբարել, ոտար բառերն առանց կարեվորության ոգտագործելու գեմ»:

Ճիշտ ե մեղ մոտ քիչ չեն ոտար ծագում ունեցող բառերը, վորոնք զիտեն բոլորը, մեծից մինչեվ վորքը, բառեր վորոնք մտել են մեր յերկրի ժողովուրդների կյանքի ու կենցաղի մեջ: Որինակ, «Սոցիալիզմը», «Կոմունիզմ», «Խոտերնացիոնալ», «Ճրակտոր», «Ավտոմոբիլի», «Խաղիթո» և այլն: Այս բառերը միջազգային են: Նրանք վոչ վոքի մոտ դժվարություն չեն առաջացնում:

Ուուսաց լեզուն աղջատվում ե նաև անհամար կը ճատկումների ճանապարհով: Խվանովյան մարզի, Շուշիկու ըրջանի Դիմիտրովի անվան կոլտնտեսության թերթը այսպիսի վերնագրի և տվել: «ՔԾԻ»-ի վերանորոգումը»: Թղթակցությունից յերեվում ե,

բոսքը գյուղատնտեսական ինվենտարի մասին եւ թայց չե՞ վոր ամենից ավելի հասարակ կլիներ տալ «ինվենտարի վերանորոգումը» վերնադիրը, իսկ թե ի՞նչ ինվենտար ե, հայտնի յեւ թղթակցության բոշ վանդակությունից :

Կրծառված, աղճառված բառերը վոչ միայն շատերին անհասկանալի չեն, այլև հաճախ ներդաշնակ չեն հնչում, դեկեցիկ չեն, յերեմն ել այլանդակ են : Ճիշտ ե, քիչ չեն հիմնարկությունների, ձեռնարկությունների կրծառված անուններ, վորոնք գործածության մեջ են մտել : Որինակ, բոլորին շատ լավ հայտնի յեւ, թե ինչ են նշանակում դյուղխորհուրդ, Համակ(ր)կ շրջկոմ, կոմսոմոլ, կոլտնտեսություն, կրծառումները : Բայց «Կրասնի Զապոլեկ» կոլտնտեսության (Լենինգրադի մարզ, Ոկուլովյան շրջան) պատի թերթի խմբուն «կոմսոմոլ» կրծառ անունը դուք չեկավ : Թերթի անվերջ կրկնում ե իր հորվումը «կոմսոմոլի կազմակերպություն» :

Հանդիպում են մարդիկ, վոր սիրում են մամուլ քաշ տալ գողերի ժարգոնը, բառեր հանցագործ աշը քաշ տալ գողերի ժարգոնը, բառեր հանցագործ աշը լսարհց : Ահա որինակ, «Իսկա» պատի թերթը (Լենինգրադի մարզ, Նովոդոբրոդի շրջան, «Մոլոտ» կոլտնտեսություն) թերթում տեղափորվում ե «Ֆիլոն» գերնապիրը : Այդ բառով, վորը վերցված ե քրեական հանցագործների լեզվից, խմբագրությունը կոչում է կոլտնտեսական Ռ-ին, վորը «Հաճախակի կարգադրություններ ստանալով չէ կատարում» :

* * *

Պատի թերթի խմբուն առանձին հողվածներին ու թղթակցություններին վերնագր տալիս, միշտ պետք

ե հաշվի առնի վոչ միայն յուրաքանչյուր վերնագրի քննույթն առանձին վերցրած, այլև քերպի տվյալ համարում յեղած բոլոր վերնագրերը միասին վերցրած :

Պատի թերթի անհոգ խմբագրները, յերբեմն կոտմիտ վրիպում են թույլ տալիս յերկու ինքնուրույն վերնագրերի սխալ դասավորության հետեւվանքով, վորոնք միաձուլվելով կարգացվում են վորպես մեկ վերնագրի : Հաճախ նման միացումներից ստացվում են քաղաքականակես վնասակար վերնագրեր : Թերթերից մեկը մի լուրջություն հարվածայինի մասին թղթակցություն եր տեղափորել «Ստախանովական Յեղորովը» վերնագրով, իսկ կողքին՝ նույն տողի վրա, նույն շրիֆտով, նույն ներկով, մի գրքախտ ձիապանի մասին եր թղթակցությունը տեղափորված «Վարսակ ե գողանում» վերնագրով : Այդ յերկու վերնագրերը միանում ենին իրար և ստացվում եր մի կեղտոտ ամբաստանություն ստախանովականների հասցեյին :

Պատի թերթերում հարկավոր ե վերնագրերը մեկը մյուսից վորոշակիորեն առանձնացնել և կանխել վերնագրերի քաղաքականակես վնասակար կամ պարզապես անհեթեթ միացումները :

Բոլոր վերնագրերին միասին վերցրած ուշադրություն դարձնել հարկավոր ե նաև կրկնություններից խուսափելու համար :

«Մայակ կուլտուրի» կոլտնտեսության (Ռոստովի մարզ, Մասնիկովի շրջան) թերթի համարներից մեկում մի թղթակցություն եր տեղափորված այն մասին, վոր խոհարարութի Գրիգորեան կերակրի մասցորդները տուն ե տանում : Այդ թղթակցությանը

խմբագրությունը տվել է բոլորովին անհաջող և անդրագետ վերնագիր— «Գրիգորեա խոհարարուհու մասին», կողքին տեղափորված եր ուրիշ թղթակցություն «Պուկալովա խոհարարուհու մասին» վերնադրով վորբին խմբագրությունը մեղադրում էր նրանում, վոր նա բրիգադայի համար ջուր չեր կրում։ Այս յերկու նման, ինչպես և դրականապես անդրադեռ վերնադրերը շատ անհաճող տպագորություն են գործում։

«Կոլխոզնիկ» պատի թերթի (իվանովի մարզ—Շույսկու ըրջան) համարներից մեկում կարգում ենք այսպիսի վերնադրեր. «Մտախանովյան տասնորյակի մասին», «Մտախանովյան տասնորյակի խնդիրները»— «Մտախակցենք ստախանովյան տասնորյակին», «պատրաստ չեն ստախանովյան տասնորյակին» և այլն։

Յուրաքանչյուր վերնադիր առանձին վերցրած, կարող են և լավ լինել։ Բայց յերբ մեկ համարում դրեթե բոլոր վերնադրերը կրկնվում են— ունեն միենայն բառերը, նրանք արդեն ձանձրալի յեն դառնում, չեն դրավում ընթերցողի ուշադրությունը։

«Կոլխոզնիկ» պատի թերթի (իվանովի մարզ—տնտեսություն թերթի մեկ համարում այսպիսի վերնադրեր են տալիս. «Մեր դպրոցը», «Մեր նորությունները», «Մեր աշխատանքը»։ Ելի նույնպես յուրաքանչյուր առանձին վերցրած վերնադիր դեմ վոքինչ վատ բան չես կարող առել։ Վերնադրերը կարծես թե վատ չեն, բայց յերբ մեկ համարի վերնադրում անվերջ կրկնվում է «մեր» բառը, ստացվում է միակերպություն։

ՀԱԿԻՐՃՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԱՐԺԱՆԻՔ Ե

«Գոլոս կոլխոզնիկա» պատի թերթը (Զկալովի մարզ, Տոցկի շրջան) մի հոգվածի այսպիսի վերնադիր է տվել. «Յուրաքանչյուր կոլտնտեսականի սլարտքըն է պատվով վերջացնել գարնան ցանքը վորոշված ժամկետին»։ Վերնադիրը շատ է յերկար։ Այսուղի խօսույն և յեթ աչքի յեն ընկնում մի քանի ավելորդ բառեր. որինակ «գարնան»։ Պարզ է, յեթե թերթը դարնանց ելույս տեսել և ցանք է արվում, ապա դա գարնանացան և հիշեցնել «գարնան» ավելորդ բառը վերնադրում չարժե։ Ապա «վորոշված» բառը։ Յեթե ժամկետ կա, նշանակում է, վոր վորեւ մեկը վորոշել և այդ, ել ինչու համար է վերնադրում այդ ավելորդ բառը։ Ահա արդեն յերկու անվիճելի ավելորդ բառ։ Յերբ ասվում է «Կոլտնտեսականների պարտքն է ավարտել ցանքը», ապա ակներեվ է վոր խոսքը վոչ թե մեկի, այլ բոլորի մասին և՝ այսինքն յուրաքանչյուր կոլտնտեսականի մասին է։ Հետեվապես «Յուրաքանչյուր» բառը նույնպես շատ չի պահանջվում։ Այս նույն վերնադրում կան «պարտք» և «պատիվ» բառերը։ Այս հասկացողությունները մոտեն իրար, այդ պատճառով կարելի յեր վերնադրերը չերկարացնելու համար ողտագործել նրանցից միայն մեկը։ Այսպիսով մեր կողմից վերլուծվող վերնադրում, վորպես անհրաժեշտ մնում են հետեվյալ բառերը. «Կոլտնտեսականների պարտքն է ցանքը ժամկետին ավարտել»։ Կարելի յե անել և հետագա կրճատում, թողնելով մոտագորապես այսպիսի վերնադիր «Վերջացնենք ցանքը ժամկետին»։

Կարելի յէ այս վերնագիրը յէրկուսի բաժանել,
այսինքն կլնի վերնադիր և յենթավերնագրեր։ Որի-
նակ։

Առաջին տողը — «Կոլտնտսականների պատվի
գործը»

Յերկրորդ տողը «Վերջացնենք ցանքը ժամկետին»

Կարճ վերնագիրը լավ է կարդացվում, նա հասա-
րակ է, հասկանալի։ Գրականազետներն ու լրագրա-
յին աշխատողները, յերկար ու համառորեն աշխատում
են նրա վրա, վոր հոդվածին տան լավ, ցայտուն,
հակիրճ վերնագիր։

Բացառիկ գրական վարպետություն, գրքերին ու
հոդվածներին հակիրճ, արտահայտիչ անուններ
ուալը, վորոնք գրավում են ընթերցողի ուշադրու-
թյունը դեպի իրենք, մենք դանում ենք լենինի ու
Ստալինի աշխատություններում։ Այդ համառոտ վեր-
նագրերը, յերեմն մեկ, յերկու, յերեք բառերով ար-
տահայտել են գրքերում ու հոդվածներում շոշափված
ամենախոր հարցերն ու ամենաբարդ թեմաները։

«ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ»

Շատ կենդանի, գրավիչ վերնագրեր են նրանք,
վորոնց մեջ ոպտագործված են ժողովրդի մեջ լայնո-
քեն տարածված, առածներ, դարձվածքներ, համեմա-
տություններ, այսպես կոչված «թեվավոր խոսքեր»։

Լենինի ու Ստալինի աշխատություններում լայ-
նորեն ոպտագործվում են այսպիսի «թեվավոր խոս-
քեր»— ժողովրդական կենդանի դարձվածքներ— լայ-
նորեն տարածված արտահայտություններ, հետաքըր-
քըրական համեմատություններ։

Ահա մի քանի որինակներ։

Այն հոդվածը, վորի մեջ լենինը մերկացնում եր բուր-
ժուակաղետական կուսակցության աղբարային քաղա-
քականությունը, նա անվանել է «Փափուկ անկողին են
զցում, բայց կոչտ քնում»։ Բացելով Բալկանյան պատե-
րազմում ցարական Ռուսաստանի գրաված ստոր դիրքը,
Պլադիմիր Իլյիչը ուսւական կայսրությանը համեմա-
տում եր մի աղվեսի հետ, վորը ցանկանում է պահ-
պանել հավաքունը, վորպեսզի ինքը նրանով ապրի։
Այդ հոդվածը Իլյիչն վերնագրել է «Ազգեսի ու հավա-
քնի մասին»։ Ցարական դումայում յերկու բուրժուա-
կան կուսակցությունն զովաբանում եյին մեկը մեկու։
Լենինն այդ առթիվ մի հոդված է զրում և նրան տա-
լիս յերգիծաբանական վերնագրի «Վկուն զովում ե
աքըրին»։

Վլադիմիր Իլյիչի մոտ շատ կան նման վերնագ-
րեր, որինակ։

«Լավ ե ուշ, քան յերբեք»։ «Մառերի յետեվում
չեն տեսնում անտառը»։ «Իսկ ովքե՞ր են դատավոր-
ները»։

«Քանի վոր պատերազմ ե թող պատերազմավարի
լինի» և այլն։

1917 թ. Հոկտեմբերին Սոցիալիստական Մեծ
հոգափոխությունից քիչ առաջ ընկեր Ստալինը «Ռա-
բուչ պուտ» թերթում մի հոդված տեղավորեց, վորի
զլիսավոր միտքն այն եր, վոր կերենսկու ժամանա-
կավոր, համաձայնողական կառավարությունն ու
կոռնիլովական-միասնականները զուր են սպառում
անջատ-անջատ, ժամանակից չուտ յելույթների բոլց-

և ինկների կողմից : Ընկեր Ստալինն այդ խիստ կարե-
վոր հոգվածը վերնադրել է Հայոնի ժողովրդական
դարձվածքով «ինչքան սպասեք բան չի դուրս դա» :

Ուրիշ հոգվածի վերնադրի համար ընկեր Ստա-
լինն ողտագործել է «Վորքան ալելի յե խորանում
անտառում...» դարձվածքը և այլն

Կոլտնտեսային պատի թերթերը շատ հազվադեմ
են ողտագործում ժողովրդական դարձվածքներ, ա-
ռաջածներ և հաջող համեմատություններ :

Իսկ վորքան շատ են անհամար դարձվածքները,
առաջածները, բնորոշ համեմատությունները Խորհրդա-
յին Միության ժողովուրդների մոտ : Յանկության
դեպքում կարելի յե շատ հին ու նոր առաջածներ ու
դարձվածքներ դտնել պատի թերթերի վերնադրե-
րում ողտագործելու համար :

Ահա որինակ՝ նոր առաջածներ ու դարձվածքներ
կոլտնտեսականների մասին, վորքան կարելի յե հա-
ջողությամբ ողտագործել, վորպես համապատասխան
բովանդակության հոգվածների ու թղթակցությունն-
երի վերնադրեր .

1) Այն կոլխոզն է հարուստ, վորտեղ կյանքն է
դրուստ :

- 2) Լավ արտելում ձիերն են չաղ ու տոկուն :
- 3) Կոլխոզի բարիքը գտիր դաշտերի գիրկը :
- 4) Մենատնտես ապրել - արցունքներ թափել :
- 5) Սահման ու չափ չկա կոլխոզի բերքին հսկա :
- 6) Լավ բաժին քեզ ու ինձ կոլխոզի դաշտերից :
- 7) Զյունը դաշտերում, հացն ամբարներում :
- 8) Աշխատանքն է ամենակարող, ծուլությունը-
շաղակըատող :

9) Խորը վոր հերկես - հաց շատ կծամես :

10) Լավ աշխատանքը յերկու գար և ապրում :

11) Կողքին անգործ պառկել-աշխորեր չտեսնել :

ՄՇՏԱԿԱՆ ՎԵՐՆԱԳԻՐ

Բացի յուրաքանչյուր հոգվածի վերնադրերից կան
մշտական վերնադրեր թերթի զանազան բաժինների
համար : Այսպես կոլտնտեսային «Սովետակայա կուլ-
տուրա» ամենորյա թերթն ունի այսպիսի մշտական
վերնադրեր .

«Կոլտնտեսության որը»

«ԽՍՀՄ-ում»

«Արտասահմանում»

«Միջոցներ են ձեռք առնված»

«Վարճ ահազանդներ» :

«Կոլեկտիվնի տրուգ» կոլտնտեսության (Կիրով-
յան մարզ, Սարագուլսկի շրջան) թերթը համարից
համար «Կոլտնտեսային նորություններ» վերնադրով
մշտական բաժին է մացրել թերթում :

Այսպիսի մշտական բաժիններում կարելի յե տե-
ղավորել մեկ, յերկու և ավելի թղթակցություններ,
ընդվորում, յեթե թղթակցությունները մի քանիսն
են և մեծ, ավելի լավ և տալ նաև ինքնուրույն յենա
թափերնադրեր՝ յուրաքանչյուր թղթակցությունն
առանձնացնելու համար : Նպատակահարմար և այդ
մշտական բաժինները տեղավորել միևնույն տեղում,
վորպեսզի ընթերցողը հեշտ և շուտ կարողանա կողմ-
նորոշվել թերթում :

Կոլտնտեսային մի քանի պատի թերթերում կիրառվում են վերնագրերի այլ ձեմեր ևս :

«Պո Ստալինսկոմու սղուտի» թերթը (Ոմսկի մարզ, Շչուշինսկի շրջան, «Զարյա» կոլտնտեսություն) թղթակցությունների վերնագրերը սարքում ե յերդի ծարանական հայտարարության ձեմով : Այդ վաղովե սարքվում նաև ամբողջ թղթակցությունը : Ահա նման հայտարարություններից մի քանի որինակներ :

«Անեն ինչ յերեխաների համար

Անելու սղատրաստ ե կոլտնտեսության նախադահընկ . Լուրմիսը, բայց միայն խոսքերով : Նրա պնդումով վարչությունը վորոշեց կոլտնտեսության լավագույն չենքը մսուր դարձնել : Իսկ յերբ չենքը վերանողվեց ընկ . Լուրմիսը զբաղեցրեց այն վորակեակարան իր համար» :

«Կորած ե ձին,

Յեթե նրան խնամել սկսի 2-րդ բրիդագլայից ձիապան Դ. Ս. Կրինը : Նրան հանձնարարեցին խնամել գնել հովատակին, յերկու շաբաթում հալից զցեց, կոնչիկին նայելը սարսափելի յէ, կաշին ու վոսկորն է . . .» :

«Փահանջվում ե խոհարար

№ 3. բրիդագլայում Յ. Մ. Մատվեևի փոխարքն, վորը մի քանի ամսում նկատվել է հասարակական սննդի համար ստացված մթերքների գողության մեջ : Նա այնպէս է ճաշ պատրաստում, վոր հաճախ իր պատրաստածը միայն ինքն ե ուտում, այն ել նկատելլու վահանքով» :

Նման յերդիծական թղթակցություններն աշխուժացնում են թերթը, գրալում են ընթերցողի ուշադրությունը, մեծ հետաքրքրություն են առաջացնում կոլտնտեսականների մեջ դեպի թերթը : Այդ «Հայտարարությունները» շատ ավելի ուժեղ են դործում, քան շաբան թղթակցությունը դրոշմված, «Ավելի ուշադրություն յերեխաններին» նման վերնադրով : Կոլտնտեսության նախադահ Լուրմիսը, ձիապան Կրինը, խոհարար Մատվեևը, հավանորեն յերկար կհիշեն պատի թերթում իրենց նվիրված «Հայտարարությունները» : Իսկ յեթե մոռանան, կոլտնտեսականները կհիշեցնեն :

«ՃԱԿԱԾ» ՅԵՎ. ԼՈԶՈՒԽԳ

Բնդունված ե թերթում «Ճակատ» կոչել այն վերհաղբերը, վորը զրվում է մի թեմայի նվիրված մի քանի հողվածների ու թղթակցությունների միաս : «Ճակատի» խնդիրն ե ընդհանրացնել, միացնել, մի ամբողջության մեջ կապել նյութերի մի ամբողջ խումբ : «Ճակատն» արտացոլում է նյութերի խմբի դլամագործ դադարաբը :

Մենք չենք կանգ առնի այստեղ այն պահանջների վրա, վորոնք վերաբերում են «Ճակատին», նրա լեզվին, տեխնիկական ձեմավորմանը, քանի վոր այն բոլորն ինչ ասված է այդ առթիվ վերնադրի մասին, վերաբերում է և «Ճակատին» : Բայց հարկավոր է ընդդեմ, վոր «Ճակատի» վրա կատարվող աշխատանքը հատուկ ուշադրություն է պահանջում : Զե՞ վոր «Ճակատը» տրվում է համեմատարար կարելոր հար-

ցերի առթիվ։ Նրա իմաստն և հատուկ ուշադրությունը պրավել հենց գեղի այն հարցը, վորին նվիրված են տվյալ նյութերը։

Չենք հանձնարարում տալ ընդհանուր վերնագիր («Ճակատի»), յեր նյութերը տարբեր բնույթ ունեն, իրար հետ կապակցված չեն, նվիրված են տարբեր հարցերի։

«Ճակատը» սովորաբար քիչ յերկար և վերնագիր։ Բայց պետք է ձգտել, վոր քանի կարելի յե այն կարճ դարձնել։ Յեթե մի տողում տեղ չի անում, կարելի յե «Ճակատ» տալ յերկու տողում, ընդվորում նրանցից յուրաքանչյուրը հանդիսանում է մյուսի մտքի զարգացումը։ Ահա յերկու տողով հաջողված «Ճակատի» որինակ։

«Ամեն մի ձյան փաթիլ, ջրի կաթիլ և»

«Պահենք ձյունը դաշտերում»

Մասսաներին կարելուրագույն ինդիրները կատարելու համար մորիլիզացիայի յենթարկելու, կոլտնտեսականների ուշադրությունը մի վորոշ հարցի վրա դրավելու նպատակով, պատի թերթերը նույնանման մի խումբ թղթակցությունների վերեվը տեղավորում են «Ճակատ», վորը միաժամանակ լոգունդ և հանդիսանում։ «Զարյա սոցիալիզմա» կոլտնտեսության (Սվերդլովի մարզ, Ռուսիա չքան) թերթը հաճախ ե կիրառում նման «Ճակատ» լոգունդներ։ Համարներից մեկում խմբադրությունը տեղավորել եր խոտհունձի մասին չորս փոքրիկ հողված։

«Ստախանովաբար անցկացնել խոտահունձը» «Ճակատով»։

Մի ուրիշ անդամ թղթակցությունների մի խմբի

վրա «Ճակատ» և արգած Առաջավոր կոլտնտեսականների որինակով ավարտենք ցանքը»։ Նաև «Ճակատները» միաժամանակ հանդիսանում են կոնկրետ լոգունդներ՝ նվիրված տնտեսական հերթական կամպանիայի կատարմանը։

Պատի թերթերն այսպիսի լոգունդներ են տեղավորում քաղաքական դեպքերի, կուսակցության ու կառավարության վորոշումների, կուսակցության ու կառավարության դեկավարների ցուցումների կապակցությամբ։

«Եռվիյ պուտ» թերթը (իվանովի մարզ, Շույսկու շրջան) բարձր բերքի համար կոլտնտեսության մղածովայքարի մասին գրմած մի քանի թղթակցությունների վրա տեղավորել և «Պայշտարել ստալինյան 7-8 միլիարդ փութ հացահատիկի համար» լոգումը։

Տվյալ դեպքում մի կոլտնտեսության աշխատանքի կոնկրետ փաստերը, վոր չարագրված են մի քանի թղթակցություններում, խմբություններում և կերպով ընդհանուր քաղաքական լոգումով, վորի իրականացմանը ձգտում և ամբողջ յերկիրը։

Պատի թերթը պետք է ուշադիր վերաբերմունք ցույց տա լոգունդի ընտրությանն ու նրա ձեփակերպմանը։ Վոչ մի բոպէ չի կարելի մոռանալ վոր «Լոգունդը պայքարի նպատակների սեղմ ու պարզ ձեփակերպունքն ե» (ՍՏԱԼԻՆ)։ Յեթե խմբությունը տեղավորում է հեղափոխական տոնի կամ քաղաքական խոչոր գեղքի կապակցությամբ, ապա պետք ե ընտրել կուսակցության կենտրոնական կոմիտեյի լոգունդներից մեկը, վորոնք տպագրվում են կենտրոնա-

կան ու տեղական մամուլում : Լողունդներ ընտրելիս
պետք է անպայման հաշվի առնել կուսակցության ու
կառավագարության վորոշումները տվյալ հարցի վերա-
բերյալ, կամ վորպես լողունդ տեղավորել ընկերներ
Լենինի, Ստալինի, Մոլոտովի ու կուսակցության և
կառավագարության մյուս դեկավարների արտահայտու-
թյունները :

Ավելի զգոնություն, քաղաքական սպարզուսւ-
թյուն, գրագիտություն- ահա ինչով պետք է դեկա-
վարյեն պատի թերթի խմբագրական կոլեգիան և
թղթակիցները, վերնադիր, «Ճակատ» և լողունդ կազ-
մելիս :

Խմբագիր՝ ԳՐ. ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՏԵՂ. Խմբագիր Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գլամիլսի Լիազար Ե-2208 Պատ, № 487 Տիրամ 1000

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺԿԽ-ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „Խ. Հ“- ՏՊԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0139153

14819

згн

Б. Кайдалов

Заголовок в стенной газете

ЗАОЧНЫЕ КУРСЫ РЕДАКТОРОВ
КОЛХОЗНЫХ И БРИГАДНЫХ СТЕНГАЗЕТ

ЕРЕВАН 1939 г